# ՏԱՐԵԳԻՐՔ

2018

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

# ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

*Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական կառույցները:*
*449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի»: Այս կարգը պահպանվել է դարերի ընթացքում: Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը և, կաթողիկոսական թեմ լինելով, անմիջականորեն կառավարվում է առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:*

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: 2018թ. դեկտեմբերից Արարատի մարզի հոգևոր տեսուչ է նշանակվել Գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2018 թվականի դրությամբ թեմի տարածքում գործում է 35 եկեղեցի, 10 մատուռ, 36 ծուխ: Երևանում գործում է 17 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 32 քահանա: Արարատի մարզում գործում է 18 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում մեկ եպիսկոպոս և 19 քահանա: Ընդհանուր առմամբ թեմում հոգևոր ծառայություն է մատուցում 53 հոգևորական՝ ներառյալ առաջնորդական փոխանորդը:

Լինելով ազգային՝ Հայ Եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Ցերեկային կենտրոն
3. Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
4. Խուլերի համայնք
5. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
6. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
7. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, qahana.am կայքով ու սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
8. «Շողակն Արարատյան» ամսաթերթ
9. Գրադարան
10. Երիտասարդաց միություններ
11. Տիկնանց միություններ
12. Կիրակնօրյա դպրոցներ
13. Ծխական խորհուրդներ
14. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

2018թ.-ին Արարատյան Հայրապետական թեմում կատարվել է

3044 պսակ,

11887 մկրտություն:

# ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

***ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ***

Տ. Պետրոս ավագ քհն. Մալյան

Տ. Շահե քհն. Հայրապետյան

Տ. Անուշավան քհն. Կոշեցյան

Տ. Եսայի քհն. Արքենյան

***ՍՈՒՐԲ ՁՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ***

Տ. Գրիգոր քհն. Գրիգորյան

Տ. Հայկազուն քհն. Մկրտչյան

Տ. Վահան քհն. Առաքելյան

***ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ***

Տ. Տիրայր ավագ քհն. Սահրադյան

Տ. Ավետիս ավագ քհն. Դանիելյան

Տ. Դանիել քհն. Բաղումյան

***ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ***
***(Նորագավիթ)***

Տ. Վարդան քհն. Գափոյան

Տ. Մյուռոն ավագ քհն. Ադամյան

***ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***
***(Մալաթիա)***

Տ. Տիրան ավագ քհն. Առուշանյան

Տ. Գաբրիել քհն. Պետրոսյան

***ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***
***(Նորք-Մարաշ)***

Տ. Զաքարիա քհն. Ավետիսյան

Տ. Զգոն քհն. Աբրահամյան

Տ. Թովմա քհն. Անդրեասյան

***ՍՈՒՐԲ ԱՆՆԱ ԵՎ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ***

Տ. Զենոն քհն. Բարսեղյան

***ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ***
***(Քանաքեռ)***

Տ. Բարսեղ ավագ քհն. Ղազարյան

Տ. Շմավոն քհն. Ղևոնդյան

***ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ***
***(Նոր Նորք)***

Տ.Նորայր ավագ քհն. Բաղդասարյան

Տ. Վարդան ավագ քհն. Մկրտչյան

Տ. Կարապետ քհն. Կարապետյան

***ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ***
***(Դավթաշեն)***

Տ. Խորեն քհն. Մարուքյան

***ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ***
***(Ներքին Չարբախ)***

Տ. Հրաչյա քհն. Գյոզալյան

***ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ***
***(ՀԱԹ)***

Տ. Պարթև քհն. Մուրադյան

Տ. Կորյուն ավագ քհն. Մարտիրոսյան

***ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***
***(Ավան)***

Տ. Հարություն քհն. Ավագյան

***ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔ***

Տ. Բաբկեն քհն. Հայրապետյան

***ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ***

Տ. Զգոն քհն. Աբրահամյան

***ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ***
***(Նուբարաշեն)***

Տ. Բարդուղիմեոս քհն. Հակոբյան

***ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ***
***(Եռաբլուր)***

Տ. Մկրտիչ ավագ քհն. Թովմասյան

***ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***
***(Նոր Նորքի 1-ին զ.)***

Տ. Զարեհ քհն. Աշուրյան

***ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ***
***(Մրգավան)***

Տ. Պարգև քհն. Պալգևորգյան

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ***
***(Բյուրավան)***

Տ. Ղազար քհն. Պետրոսյան

***ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ***
***(Արարատ)***

Տ. Դավիթ քհն. Սահակյան

Տ. Եզնիկ քհն. Մալխասյան

***ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ***
***(Արգավանդ)***

Տ. Գրիգոր քհն. Հովհաննիսյան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Վերին Արտաշատ)*

Տ. Մխիթար քհն. Ալոյան

### ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Ներքին Դվին)*

Տ. Եղիշե քհն. Նուրիջանյան

Տ. Թադեոս քհն. Թադևոսյան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Վեդի)*

Տ. Հովակիմ քհն. Հարությունյան

### ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
*(Մարմարաշեն)*

Տ. Թաքուլ քհն. Գասպարյան

Տ. Ղուկաս քհն. Բալայան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Դալար)*

Տ. Եփրեմ քհն. Հարությունյան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Արևշատ)*

Տ. Հովսեփ քհն. Սարգսյան

### ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ
*(Մասիս)*

Տ. Արարատ քհն. Օրդոյան

### ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
*(Կանաչուտ)*

Տ. Դավիթ քհն. Կյուրեղյան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Ծահումյան)*

Տ. Դերենիկ քհն. Միքայելյան

### ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
*(Մասիս)*

Տ. Աշոտ քհն. Սաֆարյան

### ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
*(Մխչյան)*

Տ. Միքայել քհն. Նուրիջանյան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Նորաբաց)*

Տ. Մարտիրոս ավագ քհն. Ավետիսյան

### ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
*(Արտաշատ)*

Տ. Թաքուլ քհն. Գասպարյան

Տ. Երվանդ քհն. Բաբայան

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
*(Դաշտավան)*

Տ. Մարտիրոս ավագ քհն. Ավետիսյան

# ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

## Սիրիահայ համայնք

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում գործում է սիրիահայերի համայնքը: Ամեն ուրբաթ կազմակերպվում է քարոզխոսություն՝ արևմտահայերենով: Կազմակերպվում են նաև ուխտագնացությունների, ազգային տոներին նվիրված միջոցառումներ, մշակութապահպանմանը նպաստող այլ իրադարձություններ: Համայնքում ընդգրկված է 120 ընտանիք:

## Խուլերի համայնք

Համայնքն ունի 35 անդամ, 1 թարգմանիչ, 1 հոգևոր սպասավոր: Գործում է մնջախաղի թատրոն–ստուդիա: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում նաև Ս. Պատարագները թարգմանվում են ժեստերի լեզվով:

## Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

Համակարգում է թեմի կիրակնօրյա դպրոցների գործունեությունը՝ վերահսկելով հիշյալ կրթօջախների ուսումնական պրոցեսը:

Կիրակնօրյա դպրոցների թիվը՝

19

Ներգրավված երեխաների քանակը՝

958

Ուսուցիչների քանակը՝

18

## Գրադարան

Հիմնադրվել է 1998թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այն հոգևոր գրականությունից բացի ունի պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, ինչպես նաև՝ արվեստագիտական, ճարտարապետական, մատենագիտական-տեղեկատվական գրականություն:

Գրադարանն ունի

551

ընթերցող, ավելի քան

5000

միավոր գիրք :

## Բարեգործական ծրագրերի բաժին

Համակարգում է թեմական ու համայնքային բարեգործական ծրագրերը, կազմակերպում է սոցիալական բազմաթիվ միջոցառումներ, համագործակցում է տեղական ու միջազգային կառույցների հետ:

## Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակ

Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ 13.000 երեխաների:

# Տեղեկատվական բաժին

2018թ. հայաստանյան ՁԼՄ-ում հրապարակվել է շուրջ 200 նյութ, որոնք լուսաբանել են Արարատյան Հայրապետական թեմի կողմից կազմակերպված միջոցառումները, հոգևորականների ու երիտասարդաց միությունների անդամների մասնակցությամբ ասուլիսները: Հրապարակումների զգալի մասը վերաբերել է Ս. Սարգսի տոնի առթիվ թեմի կողմից կազմակերպված միջոցառումներին՝

- Սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած զինվորների պարգևատրում
- Ս. Պատարագ
- Քայլերթ
- Տոնական համերգ

2018թ. Ս. Սարգսի տոնի ու տոնակատարությունների մասին Տեղեկատվական բաժնի նախաձեռնությամբ պատրաստվել է 20-րոպեանոց տեսաֆիլմ:

Եկեղեցական տոների առթիվ թեմի քահանաները մասնակցել են տարբեր լրատվամիջոցների հեռուստահաղորդումներին, հիմնականում՝ առավոտյան ծրագրերին: Ամենաակտիվ մասնակցությունը եղել է Ս. Սարգսի և Ս. Հարության տոների առթիվ: Տարվա ընթացքում թեմի հոգևորականները մասնակցել են 15 ասուլիսի:

Այս տարի տարբեր լրատվամիջոցներ մեր կայքի ու ֆեյսբուքյան էջի նյութերից շուրջ 40 նյութ վերահրապարակել են իրենց կայքերում: ՁԼՄ-ին հատկապես հետաքրքրում են հոգևոր թեմաներով նյութերը՝ խորհուրդների ու ծեսերի, բարեպաշտական սովորությունների մեկնությունները, հարցազրույցները:

Այս տարի թեմում հիմնադրվել է «Թեմ TV» ինտերնետային հեռուստաալիքը: Այն ունի հետևյալ հաղորդաշարերը.

- «Մանկունք»,
- «Աստծո կամքը»,
- «Քարոզներ»,
- «Տերունական օր»,
- «Եվ Հիսուսն ասաց»,
- «Թեմական կյանք»,
- «Հոգևոր զրույցներ»,
- «Հարցեր քահանայից»:

2018-ին հատկապես արդյունավետ համագործակցություն է եղել Հանրային հեռուստաընկերության «Հայրենեաց» հեռուստահաղորդման շրջանակում: Թեմի քահանաները ներկայացրել են Հայ եկեղեցու վարդապետությունը, ծիսական կյանքը, խորհուրդները, հայկական մշակույթի առանձնահատկությունները:

2018թ. թվականին «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում ամեն շաբաթ շարունակվել է հեռարձակվել «Ես կամ...» հաղորդաշարը, որը վարում է Տ. Շահե քահանա Հայրապետյանը:

## Ռադիոծրագրեր

2018թ. շաբաթական մեկ անգամ պարբերականությամբ Հայաստանի Հանրային ռադիոյով եթեր են հեռարձակվել «Շողակն Արարատյան» և «Մանանա» մանկապատանեկան ռադիոհաղորդումները:

2018 թվականի ընթացքում ձայնագրվել է «Շողակն Արարատյան» 48 հաղորդում, որոնք ունեն հոգևոր, մշակութային ուղղվածություն: Ծրագիրը պարբերաբար անդրադառնում է եկեղեցական տոներին և թեմում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

2018թ. հոկտեմբեր-դեկտեմբերին եթեր են հեռարձակվել հարցազրույցներ «Ընտանիք» խորագրի ներքո: Բացի հոգևորականներից տաղավարում հյուրընկալվել են հոգեբաններ, սոցիոլոգներ, լրագրողներ, կենսաբաններ, ազգագրագետներ, ովքեր իրենց մասնագիտական ուսումնասիրությունները ներկայացրել են ռադիոունկնդրին՝ արժևորելով հայ ընտանիքի ավանդական արժեհամակարգը, կարևորելով ընտանիք պահպանման խնդիրները:

«Մանանա» մանկական ծրագիրը երեխաների ամենասիրելի հաղորդումներից է: Այն հիմնականում ներկայացնում է ավետարանական հետաքրքրաշարժ պատմություններ, որոնք մատուցվում են հեքիաթների և առակների ձևով՝ մատաղ սերնդի միտքն ու հոգին կրթելով քրիստոնեական առաքինությունների, ազգային ավանդույթների, սիրո, գթասրտության, բարության ոգով:

- Էլեկտրոնային էջ

Տեղեկատվական ու քարոզչական աշխատանքն ամբողջովին արտացոլվում է թեմի պաշտոնական կայքում՝ www.qahana.am, և սոցիալական ցանցերում՝ Ֆեյսբուքյան՝ Qahana.am, Instagram՝ Qahana.am , Twitter՝ Արարատյան թեմ :

Ֆեյսբուքյան *Qahana.am* էջն ունի

71,500
հետևորդ:
*www.qahana.am* կայքից օգտվել է

326,636

օգտատեր:

Գրանցվել է

653,083 այցելություն
1,592,415 էջի դիտում:

## «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ

2018 թ. լույս է տեսել «Շողակն Արարատյան» ամսաթերթի 14 համար, յուրաքանչյուրը 1000 օրինակով: 2018 թ. մարտ ամսից այն երկշաբաթաթերթից վերածվել է գունավոր ամսաթերթի:
Թերթին թղթակցել են մշակութային գործիչներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ, պատմական գիտությունների թեկնածուներ, թանգարանների գիտաշխատողներ, լրագրողներ:
Թերթում ավելացել են «Մի լուսանկարի պատմություն», «Մենք՝ Վարդանանք», «Հոգևոր անդաստան», «Մելքիսեդեկի կոչումը», «Երևան-2800», «Երիտասարդ թեմականի օրագիր», «Հոգևոր խրատանի», «Գրապանակ», «Հավատի այբուբեն», «Թեմական կյանք», «Մեկը՝ տասներկուսից» խորագրերը:
2018թ. ակտիվ է եղել նաև «Շողակն Արարատյան» ֆեյսբուքյան էջը: Այստեղ ամենօրյա գրառումներ են կատարվել հայրաբանությունից, Աստվածաշնչից, սրբերի վարքից, ինչպես նաև հրապարակվել են թերթում տպագրված նյութերը, ինչի արդյունքում էջի հետևորդների թվաքանակը ավելացել է՝ 2100-ից հասնելով 5600-ի:

## ՀԵԵՄ կրթադաստիարակչական կենտրոն

2018 թվականին կենտրոնում կազմակերպվել են հետևյալ դասընթացները՝

***Անգլերեն հանրային խոսք***- իրականացվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Արարատյան Հայրապետական թեմի ուսումնական կենտրոնի համագործակցության արդյունքում: Մասնակիցների քանակը՝ 16 հոգի:

***Սրբանկարչություն*** - դասավանդվել է շաբաթական երկու օր, 3 ժամ տևողությամբ, մասնակիցների քանակը՝ 10 հոգի:

***Ամառային դպրոց -*** դպրոցը իր գործունեությունը սկսել է հունիսի 1-ից: Մասնակիցների քանակը՝ 16 երեխա: Ուսուցանվում էր հայոց լեզու, գրականություն, օտար լեզուներ, հոգևոր դաս, ֆիզիկական պատրաստություն, երգ, պար, ընթերցանություն, նկարչություն, հոգեբանություն:

***Կիրակնօրյա դպրոց*** հաճախել է 15 երեխա:

# ՀՈԳԵՎՈՐ-ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

## ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմի համայնքներում հովվական գործունեության ամենակարևոր հանգրվաններից են դպրոցները, մանկապարտեզները, մանկատները, ծերանոցները: Հոգևոր և ազգային տոների առթիվ թեմի քահանա հայրերը ոչ միայն մասնակցել են տվյալ հաստատություններում կազմակերպված միջոցառումներին, այլև իրենք են նախաձեռնել բազմաթիվ միջոցառումներ գրեթե բոլոր համայնքներում:

Այցելություններ են կատարվել ավելի քան 60 դպրոց, 46 մանկապարտեզ, ուսումնական և մշակութային կենտրոններ և ծերանոցներ:

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատյան Հայրապետական թեմում

2018թ.-ին իրականացվել է.

*Դեպի Հայաստանի և Արցախի սրբավայրեր՝*

**411 ուխտագնացություն,**

**12,122 մասնակից :**

*Դեպի Արևմտյան Հայաստան*

**3 ուխտագնացություն:**

*Դեպի Երուսաղեմ*

**4 ուխտագնացություն:**

## ՃԱՄԲԱՐՆԵՐ

2018 թ. ամռանը թեմի մի շարք համայնքներում նախաձեռնվել և կազմակերպվել են հոգևոր բակային ճամբարներ: Բակային ճամբարներ են կազմակերպվել՝

- ՀԱԹ Ս. Երրորդություն
- Կաթողիկե Ս. Աստվածածին
- Դավթաշենի Ս. Նահատակաց
- Նուբարաշենի Ս. Նահատակաց
- Երևանի Ս. Հովհաննես
- Նոր Նորքի 1ին զանգվածի Ս. Աստվածածին
- Արտաշատի Ս. Հովհաննես
- Արևշատի Ս. Աստվածածին
- Մրգավանի Ս. Հակոբ
- Ներքին Դվինի Ս. Հարություն
- Մասիսի Ս. Թադեոս
- Մասիսի Ս. Գևորգ
- Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ
- Մխչյանի Ս. Հովհաննես

եկեղեցիներում: Բակային ճամբարներին մասնակցել է 1510 երեխա:

## ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՀԹ բոլոր եկեղեցիներում 2018 թվականին կազմակերպվել է Հսկման կարգ, Ս. Գրքի սերտողություն, քարոզխոսություն. իրականացվել է 1468 հոգևոր–քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է 46,375 հավատացյալ:

Հոգևոր քարոզչություն է իրականացվել նաև համայնքների *մշակութային, կրթական և հասարակական* կառույցներում. կազմակերպվել է 830 հոգևոր–քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է 50,117 հավատացյալ:

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

## Ս. Ծնունդ

Տոնական միջոցառումներ են կազմակերպվել թեմի բոլոր համայնքներում:

Օրհնված ջուր և աղոթագրքեր են բաժանվել Ռ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնում բուժվող երեխաներին:

## Ս. Սարգսի տոն

Հունվարի 27-ին՝ Ս. Սարգսի տոնի առթիվ, Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում, հավարտ Սուրբ Պատարագի, Սուրբ Սարգսի մասունքակիր աջով կատարվեց սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած զինվորների օրհնության կարգ: Նոր Նորքի և Արգավանդի Սուրբ Սարգիս եկեղեցիներում հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց երիտասարդների օրհնության կարգ:Այնուհետև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի դահլիճում սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած 22 զինվորներ պարգևատրվեցին Ս. Սարգսի խորհրդանշական զարդապատկերներով, տոնի խորհրդանշական նվերներով և 200.000-ական ՀՀ դրամով: Պարգևատրումից հետո մեկնարկեց տոնական քայլերթ՝ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու բակից դեպի Սիրահարների պուրակ, որն ավարտվեց տոնական համերգով:

Սուրբ Սարգսի տոնի նախօրեին Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունների և Երևանի քաղաքապետարանի անմիջական աջակցությամբ «Սիթի Լուք» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, «Ժողովրդավարության Իրավունքի Միջազգային Կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և «Հայ-ռուսական երիտասարդական Միությունը» կազմակերպեցին և իրականացրեցին Սուրբ Սարգսին նվիրված «Հեշթեգ Սուրբ Սարգիս» (#surbsargis) ֆլեշմոբը:

Արարատյան Հայրապետական թեմի և «Բուկինիստ» գրախանութների ցանցի համագործակցության արդյունքում իրականացվեց «Իմ գաղտնի գրքաՍԵՐ» խորագրով միջոցառումակցիան:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում երիտասարդական ակումբների դաշնության (FYCA) և Արարատյան Հայրապետական թեմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ սիրո և երիտասարդների արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնին նվիրված միջոցառում:

Արևշատի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում տեղի է ունեցել խաչի թափոր, եկեղեցում կատարվել է երիտասարդների օրհնության կարգ:

## Բարեկենդան

Հնում բարեկենդանի տոնախմբությունները սկսվում էին տոնից մի քանի օր առաջ: Խնջույքների անբաժան ուղեկիցներն ազգային երգերն ու պարերն էին, որոնք սկսվում էին առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ էին դառնում:Այդպես էլ Բարեկենդանը տոնում են այսօր Արարատյան Հայրապետական թեմում: Հունվարի 29-ին Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու բակում տեղի ունեցավ Բարեկենդանին հատուկ ազգային կերակրատեսակների, ձեռարվեստի և նկարչական աշխատանքների ցուցադրություն:Հունվարի 30-ին Դավիթաշեն վարչական շրջանում «Բուն Բարեկենդանի» տոնին ընդառաջ տոնածիսական միջոցառում իրականացվեց, իսկ փետրվարի 1-ին՝ Զորավոր Ս. Աստվածածին և փետրվարի 2-ին՝ Ավան վարչական շրջանի Սուրբ Աստվածածին եկեղեցիների բակերում ազգային-ավանդական կերակուրներով, երգուպարով նշեցին Բարեկենդանը:

Փետրվարի 4-ին Ծենգավիթ վարչական շրջանում Պատանեկության ստեղծագործական կենտրոնի նախասրահում կազմակերպվեց թեմատիկ գրականության, կենտրոնի սաների ձեռքի աշխատանքների և տոնական ուտեստների ցուցադրություն:

Փետրվարի 5-ին՝ Նուբարաշեն, իսկ փետրվարի 6-ին՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում ազգային-ավանդական կերակուրներով, երգուպարով անցկացվեցին տոնական միջոցառումներ:

Փետրվարի 7-ին Արաբկիր վարչական շրջանի նորակառույց եկեղեցու բակում տեղի ունեցավ ազգային երգ ու պարով, ավանդական ուտեստների հյուրասիրությամբ, ձեռագործ աշխատանքների ցուցադրությամբ և թումանյանական բեմադրություններով միջոցառում:

Նորք-Մարաշ վարչական շրջանում Բարեկենդանը նույնպես տոնվեց ազգային

երգ ու պարով, ուրախ խաղերով ու կատակներով և տոնին բնորոշ ուտեստներով:

Բուն Բարեկենդանի օրը՝ փետրվարի 11ին, Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունների նախաձեռնությամբ հավարտ Ս. Պատարագի մեկնարկեց դիմակավորված քայլերթ, որն ունեցավ թեմատիկ կանգառներ՝ անակնկալներով և թատերական բեմադրություններով հարուստ:

## Տեառնընդառաջ

Տոնի առթիվ թեմի բոլոր համայնքներում կազմակերպվեցին միջոցառումներ: Կատարվեց նորապսակների օրհնության կարգ:

## Ս. Հարություն

Ս. Հարության տոնի Ճրագալույցի Ս. Պատարագից հետո մեկնարկեց ավանդական դարձած «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթը՝ առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց մինչև Հանրապետության հրապարակ:

Թեմի եկեղեցական համայնքներում կազմակերպվեց հավկիթների օրհնություն, սիրո ճաշ, մատաղի բաժանում, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ եկեղեցիների երիտասարդաց միությունների և համայնքի անդամների մասնակցությամբ:

## Երեխաների պաշտպանության օր

Թեմի եկեղեցիներում կատարվեց մանուկների օրհնության կարգ, կազմակերպվեցին տոնական միջոցառումներ:

## Վարդավառ

Թեմի երիտասարդաց միությունները «Վերականգնենք մեր ազգային տոները» խորագրի ներքո կազմակերպեցին Վարդավառի նախատոնակ:

Թեմի համայնքներում հոգևոր արարողություններից բացի տոնը նշվեց նաև ժողովրդական ավանդույթներով՝ ջրախաղով ու ազգագրական համույթների ելույթներով, կազմակերպվեցին նաև ուխտագնացություններ:

## Ս. Աբգար թագավորի տոն

Ս. Աբգար թագավորի հիշատակության օրը տեղի ունեցավ արքային վայել խաղի՝ շախմատի ամենամյա մրցաշարը:

## Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ

2018թ. Արարատյան Հայրապետական թեմի միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակի կողմից նախաձեռնվել և կյանքի են կոչվել բազմաբնույթ բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ: Դրանք իրականացվել են եկեղեցական և պետական հետևյալ տոների ժամանակ.

- Ս. Ծնունդ և Աստվածհայտնություն
- Ս. Վարդանանց տոն
- Ս. Սարգիս զորավարի տոն
- Տեառնընդառաջ
- Ծաղկազարդ
- Մայրության և գեղեցկության օր
- Ս. Հարության տոն
- Երեխաների պաշտպանության միջազգային օր
- Ս. Աստվածածնի վերափոխման տոն
- Սեպտեմբերի 1
- Խաչվերաց
- Տարեցների միջազգային օր
- Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր
- Ամանոր

*Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության* տոնի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել թեմին օգնության դիմումներ ներկայացրած անապահով 12 ընտանիքի (գրենական պիտույքներ, հագուստ, սնունդ, ծածկոցներ, կոշիկ, հիգիենայի պարագաներ):

*Ս. Սարգսի* տոնի առթիվ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում կազմակերպված միջոցառման ժամանակ «Հավատ և սեր» ՀԿ-ի 30 և «Լույսի Աստղ» հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների ՀԿ-ի 24 երեխաներ ստացել են գրենական պիտույքների փաթեթներ (տետրեր, բլոկնոտներ, գրիչներ):

*Ս. Սարգսի* տոնի առթիվ Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցում Սարգիս անունը կրող 50 մարդու բաժանվել են գրենական պիտույքների փաթեթներ:

*Ս. Վարդանանց* տոնի կապակցությամբ Սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցում «Հայաստանի զոհված ազատամարտիկների ընտանիքների ընկերություն»-ում գրանցված 18 և եկեղեցու համայնքի 12 Վարդանների և Վարդանյանների տրամադրվել են նվերների փաթեթներ՝ գրենական պիտույքներ և ձմեռային գլխարկներ:

*Տեառնընդառաջի* առթիվ բարեգործական այցելություն է իրականացվել Երևանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզ: Նոր հագուստներ, կոշիկներ, գուլպաներ, զուգագուլպաներ, հողաթափեր են տրամադրվել հաստատության 84 փոքրիկների:

*Ծաղկազարդի* տոնին իրականացվել են հետևյալ բարեգործական ծրագրերը.

- Բյուրավան, Ջրաշեն, Բարձրաշեն, Հովտաշեն, Նշավան գյուղերից Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի ժամանած թվով 300 մանուկների բաժանվել են նվերներ՝ հագուստ, խաղալիք, կոշիկ, դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ:
- Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցում համայնքի անապահով ընտանիքների 30 երեխայի, ինչպես նաև «Ալեքս» ՀԿ-ում գրանցված 20 հաշմանդամ երեխայի տրամադրվել են նվերների փաթեթներ:

*Սուրբ Հարության* տոնի կապակցությամբ Արարատյան Հայրապետական թեմում կյանքի կոչված բարեգործական ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում սննդի փաթեթներ և աղոթագրքեր են բաժանվել թեմին օգնության խնդրանքով դիմած 50 անապահով ընտանիքի:
- Ս. Հովհաննես եկեղեցու երիտասարդների հետ բարեգործական այցելություն է կատարվել սահմանամերձ Բերքաբեր, Աչաջուր գյուղերի և Դիլիջանի անապահով բազմազավակ ընտանիքներ: Տրամադրվել է սնունդ, հագուստ և կոշիկ, սպասք, կենցաղային տեխնիկա, գրենական պիտույքներ:
- Թեմին աջակցության խնդրանքով դիմած «ԻՊՄՎ» բարեգործական հասարակական կազմակերպությունում հաշվառված 80 հաշմանդամություն ունեցող անձի

տրամադրվել է հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ, սնունդ:

- Աջակցություն է ցուցաբերվել Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցու կողմից կազմակերպվող զատկական տնայցերի ծրագրին, տրամադրվել են սննդի փաթեթներ:

*Ս. Աստվածածնի Ավետման* տոնի առթիվ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի 32 նորածնի բաժանվել են մկրտության սրբիչներ, օրհնված խաչեր, նարոտներ, մանկական հագուստ և թերթոններ:

*Մայրության և գեղեցկության* տոնի կապակցությամբ զոհված ազատամարտիկների ընտանիքների 20 տիկնանց տրամադրվել է հագուստ, կոշիկ, կանացի պայուսակներ, սնունդ:

*Հունիսի 1-ին* Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Այգեստան գյուղի մանկապարտեզին նվիրաբերվեցին երկկողմանի գրատախտակներ, խաղեր և խաղալիքներ, մանկական գրքեր, գրենական պիտույքներ, կոշիկներ, բեմական հագուստ, հիգիենայի պարագաներ:

*Սեպտեմբերի 1-ի*ն հագուստ, կոշիկ, դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ են տրամադրվել թեմին օգնության խնդրանքով դիմած 9 ընտանիքի:

*Ս. Մարիամ Աստվածածնի Ծննդյան* տոնին Մասիսի ծննդատան 16 մայրերի տրամադրվեց մանկական հագուստ:

*Խաչվերացի* կապակցությամբ իրականացվել են տնայցեր՝ թեմին օգնության դիմումներ ներկայացրած 7 խիստ անապահով ընտանիք:

*Տարեցների միջազգային օրվա* առթիվ, այցելություն է կատարվել թիվ 1 տուն-ինտերնատ: 250 տարեցների տրամադրվել է հագուստ և սնունդ: Վերոնշյալ ծրագրի շրջանակում իրականցված 18 տնայցի ընթացքում ցուցաբերվել է նաև ֆինանսական աջակցություն:

*«Սեր հանուն սիրո»* ծրագրի շրջանակներում սահմանում ծառայող սպա Գուրգեն Համբարձումյանին տրամադրվել է 50.000 դրամ՝ խիզախությամբ և հոգևոր պատրաստությամբ աչքի ընկնելու համար:

*Նոյեմբերի 8-ին* ԵԿՄ-ի և «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամի կողմից Եռաբլուր պանթեոնում կազմակերպված մեծարման և հիշատակի միջոցառման մասնակից թիվ 155 դպրոցի 35 սանի նվիրաբերվեցին գրենական պիտույքների փաթեթներ:

*Հաշմանդամների միջազգային օրվա* կապակցությամբ թեմում կյանքի կոչված բարեգործական ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 78 հաշմանդամություն ունեցող անձի:

*Դեկտեմբերի 3-ին* Արաբկիրի եկեղեցում կազմակերպված բարեգործական միջոցառման ժամանակ 50 հաշմանդամություն ունեցող անձի ցուցաբերվել է հոգևոր և նյութական աջակցություն:

*Դեկտեմբերի 6-ին* Ս. Երրորդություն եկեղեցում բարեգործական միջոցառում և հյուրասիրություն է կազմակերպվել՝ Խարբերդի մասնագիտացված մանկատան 16 սանի համար:

Ամանորի և Ս. Ծննդյան տոների կապակցությամբ իրականացվել է բարեգործական ծրագիր, որի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 150 ընտանիքի:

*Դեկտեմբերի 21-ին* աջակցություն է ցուցաբերվել Մասիսի «Առաքելություն Հայաստան» կազմակերպության բարեգործական ճաշարան այցելող 30 միայնակ ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց:

Իրականացվել է 15 տնայց անապահով ընտանիքներ: Տրամադրվել է հագուստ, սննդի փաթեթեներ, հիգիենայի պարագաներ, կենցաղային անհրաժեշտ իրեր:

*Դեկտեմբերի 28-ին* Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու համայնքի անապահով 50 ընտանիքի երեխաների տրամադրվել է սնունդ և գրենական պիտույքներ:

2018թ. գրասենյակը համագործակցել է Armenian Round Table of WCC, World Vision Armenia, ARCS, GAiN, «Կամրջակ» միջազգային հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարերարների հետ:

Օժանդակություն է ցուցաբերվել թեմին հոգևոր և նյութական աջակցության խնդրանքով դիմած հետևյալ տեղական հասարակական կազմակերպություններին, միություններին և ընկերություններին.

- «Զեյթուն» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «Լույսի Աստղ» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «Էրեբունու համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքների» ընկերություն,
- «Մարիամ» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամ,

- «Տաքև» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «Լուսաշող» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «Հուսաստղ» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ,
- «ԻՊՄՎ» բարեգործական ՀԿ,
- Արաբկիր համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց ընկերություն,
- «Ալեքս» ՀԿ,
- «Հավատ և սեր» ԲՀԿ,
- «Աստղաթև» ՀԿ
- «Արև-Երեխաներ» երեխաների առողջության և զարգացման կենտրոն ՀԿ

Մասնակցություն ենք ունեցել միջազգային և տեղական ՀԿ-ների նախաձեռնած սեմինարների, միջոցառումների, ինչպես նաև մարդասիրական այլ ձեռնարկների:

Թեմի կրթական հաստատությունների, ծխական և կիրակնօրյա դպրոցների, ինչպես նաև մանկական երգչախմբերի սաները նույնպես եղել են թեմի բարեգործական ծրագրերի ուշադրության կենտրոնում: Պարբերաբար օգնություն է տրամադրվել թեմի եկեղեցիների ծխականներին և կարիքավոր հավատացյալներին:

Բազմակողմանի աջակցություն է ցուցաբերվել հետևյալ հաստատություններին.

- Երևանի տեսողական խանգառումներ ունեցող երեխաների Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոց
- Թիվ 1 տուն -ինտերնատ
- «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
- Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն
- Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ
- Նորքի թիվ 17 հատուկ դպրոց
- Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ
- Նոր Նորքի հատուկ գիշերօթիկ դպրոց
- Սբ.Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն
- «Առաքելություն Հայաստան» Մասիսի ցերեկային կենտրոն
- Մասիսի զարգացման երիտասարդական կենտրոն
- ՀՕՖ «Երեխաների աջակցության կենտրոն»
- Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
- Կենտրոն ՔԿ հիմնարկ
- Դատապարտյալների հիվանդանոց
- «Մոր և մանկան» ծննդատուն
- Մասիսի «Զարգացման երիտասարդների կենտրոն»
- Գյումրու մանկատուն
- Արտաշատի «Երեխաներ զարգացման կենտրոն»
- «Ջերմիկ անկյուն» հաշմանդամություն ունեցող մարդկանց կենտրոն:

## Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակ

Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ

13.000 երեխաների:

2018 թ.-ին հատկացվել է

160.090 ԱՄՆ դոլար՝

698 ծնողազուրկ,

ինչպես նաև բազմազավակ ընտանիքներում ապրող

57 երեխաների համար:

# ԾԽԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Հատուկ կարևորվում է նաև երիտասարդների շնորհների բացահայտումն ու ինքնահաստատումը հասարակական կյանքում:

Թեմում գործում է՝
Երիտասարդաց 25 միություն
681 անդամներով:

Երիտասարդաց միությունների հետ կազմակերպվում են Աստվածաշնչի սերտողություններ, հոգևոր զրույցներ, ազգային–եկեղեցական տոների առթիվ միջոցառումներ, ուխտագնացություններ, խաչերթեր, սոցիալական ծրագրեր:

## ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական-համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ տիկնանց միության անդամները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին, կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին:

Թեմում գործում է՝
Տիկնանց 15 միություն
337 անդամներով:

## ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականներին հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից:

## ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Այս կառույցի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Երեխաների քրիստոնեական դաստիարակությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների զորացման գրավականն է:

Թեմում գործում է
կիրակնօրյա 19 դպրոց
958 աշակերտներով:

## ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ՝

- ***Ղուկասի ավետարանը ժեստերի լեզվով-*** Տեսասկավառակը ներառում է աստվածաշնչային 24 հոլովակներ: Լույս է տեսել 2000 օրինակից:
- ***Պատարագամատույց-*** Տպագրվել է Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի նախաձեռնությամբ՝ Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանի և Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանի պատրաստած նյութերի հիման վրա:
- ***Աղոթագիրք ըստ Գրիգոր Սկևռացու-*** Գրիգոր Սկևռացու սույն աղոթագիրքը հայ քրիստոնյաների համար կարևոր և եզակի մի աղոթամատույց է, որում հեղինակը, մատնանշելով մեղքերի ութ տեսակները, դրանք գիտակցելու և աղոթքի միջոցով այդ մեղքերից ձերբազատվելու ուղի է ցույց տալիս: Գրիգոր Սկևռացու այս աղոթագրքի դերն ու օգտակարությունը կարևորելով՝ փորձ արվեց այն գրաբարից աշխարհաբարի վերածել՝ ի շահ աղոթասեր ընթերցողների:
- ***Հինգ դարերի զանազանություն-*** Ընթերցողին է ներկայացվում Պողոս եպս Ադրիանուպոլսեցու 1902 թ. Վաղարշապատում հրատարակված եռահատոր համանուն երկի առաջին հատորի արևելահայերեն թարգմանությունը, որը նվիրված է Հին Կտակարանի՝ Արարչագործությունից մինչև Մովսեսի մահը ընկած ժամանակահատվածին՝ մարդկության պատմության հոգևոր առաջին երեք դարաշրջաններին: Գրքում հարցուպատասխանի ձևով ներկայացված է հինկտակարանյան պատմությունների ամբողջական պատկերը՝ մանրամասներով և խրթին հատվածների մեկնություններով:



# ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՇՎԵԼ ԵՆ՝

- ***Սուրբ Գրիգոր Նարեկացու բաց խորանը-*** նոյեմբերի 21-ին Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում կատարվեց Սուրբ Գրիգոր Նարեկացու բաց խորանի օրհնության և օծման սրբազան արարողությունը՝ ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի: Գրիգոր Նարեկացու բաց խորանի գաղափարի հեղինակ-հովանավորներն են էդմոնդ Կիրակոսյանը և Արման Ջուլհակյանը, նախագծող-ճարտարապետ՝ Հակոբ Բաբախանյան, քանդակագործ՝ Արտակ Համբարձումյան:
- ***Դաշտավանի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին-*** հուլիսի 6-ին օծվեց Արարատյան Հայրապետական թեմի Դաշտավան համայնքի նորակառույց եկեղեցին՝ ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի: Եկեղեցու շինարարությունը մեկնարկել էր դեռևս 2012թ.-ին: Սրբազան Հայրը սրբալույս մյուռոնով նախ օծեց եկեղեցու տասներկու սյուները, ավազանը, խորանը, խորանի ճակատը և Սուրբ Սեղանը: Եկեղեցին անվանակոչվեց Սուրբ Մարիամ Աստվածածնի անվամբ:
- ***Ջուղայի խաչքարի կրկնօրինակը-*** հունվարի 29-ին Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ Վեդի քաղաքի Վ. Սարգսյանի անվան զբոսայգում օծվեց Ջուղայի խաչքարի կրկնօրինակը:

©ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ,
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ
2019թ.



www.qahana.am